ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 74-Ա

ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 1- 3-ՐԴ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ,1- 10-ՐԴ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՓԱԿՈՒՂԻՆԵՐԻ,1-7-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԵՐԻ, ՄԱՍԻՍ ԿԱՅԱՐԱՆԻ ՄԻ ՀԱՏՎԱԾԻ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ/ԼԵԴ ԼՈՒՍԱՏՈՒՆԵՐՈՎ/ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՐԱՏԱՊ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 23-րդ կետի 5-րդ ենթակետի բ/պարբերությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մասիսի քաղաքապետարանի կարիքների համար նախագծանախահաշվային աշխատանքների կատարման պետական գնման թիվ ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-20/4 պայմանագրով կատարողը ժամանակին և պատշաճ չի կատարել պայմանագրային պարտավորությունները, որի հետևանքով Մասիս քաղաքային համայնքը չի կարող իրականացնել քաղաքի տնտեսական զարգացմանն ուղղված ծրագրերը, ուստի նման իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է.**

1.Մասիս քաղաքի 1-3-րդ փողոցների շարունակության,1-10-րդ փողոցների փակուղիների,1-7-րդ թաղամասերի, Մասիս կայարանի մի հատվածի արտաքին լուսավորության ցանցի անցկացման/ԼԵԴ լուսատուներով/ նախագծանախահաշվային աշխատանքների և Մասիս քաղաքային համայնքի թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հիմնանորոգման նախագծանախահաշվային աշխատանքների ձեռքբերումը համարել անհետաձգելի :

2.Թույլատրել Մասիս քաղաքային համայնքի ղեկավարին չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով Մասիս քաղաքի 1-3-րդ փողոցների շարունակության,1-10-րդ փողոցների փակուղիների,1-7-րդ թաղամասերի, Մասիս կայարանի մի հատվածի արտաքին լուսավորության ցանցի անցկացման/ԼԵԴ լուսատուներով/ նախագծանախահաշվային աշխատանքների և Մասիս քաղաքային համայնքի թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հիմնանորոգման նախագծանախահաշվային աշխատանքների ձեռքբերումը իրականացնել հրատապ մեկ անձից գնման ընթացակարգով:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲԳԱՐՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

Համայնքի ղեկավար՝ **ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**